

Խաղերի մշակման դասընթացավար/ ուսումնական բովանդակություն մշակող

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է խաղերի մշակման մասնագետի, ով կմիանա կրթական բովանդակություն մշակող թիմին, կվարի խաղերի մշակման դասընթացներ, կմշակի Թումո կենտրոնների ուսանողների համար նախատեսված կրթական բովանդակությունը և նյութը՝ զարգացնելով և կատարելագործելով Թումոյի կրթական ուսումնական պլանը ողջ տարվա ընթացքում:

Աշխատանքային գործառույթներ

- Մշակել և վարել խաղերի մշակման դասընթացներ Թումո ուսանողների համար
- Աշխատել Երևանում, ինչպես նաև գործուղվել Թումո այլ կենտրոններ՝ մեկ ամիս տևողությամբ, տարեկան մի քանի անգամ
- Զարգացնել ուսանողների հմտությունները՝ մշակելով ինքնուսուցման կրթական ծրագիրը
- Յուրաքանչյուր դասընթացի ավարտին հավաքագրել և գնահատել ուսանողների արդյունքները
- Ստուգել ուսանողների ինքնուսուցման ծրագրի արդյունքները՝ ապահովելով հետադարձ կապ
- Անհրաժեշտության դեպքում իրականացնել այլ առաջադրանքներ

Անհրաժեշտ որակավորումներ և հմտություններ

- Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում
- Կրթական ոլորտում և պատանիների հետ աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է

- Խաղերի ծրագրավորման և աշխարհներ ձևավորելու փորձ
- Ծրագրերի իմացություն` Unity
- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Լեզուների իմացություն. հայերեն` անհրաժեշտ, անգլերեն` ցանկալի
- Ուսումնասիրություններ կատարելու հմտություն
- Թե՛ անհատապես և թե՛ թիմի կազմում աշխատելու ունակություն
- Նախատեսված ժամկետներում առաջադրանքը ավարտին հասցնելու և աշխատանքային բարձր արդյունավետությունը ապահովելու ունակություն

Դիմելու կարգը`

Դիմելու համար խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը և պորտֆոլիոն jobs@tumo.org էլ. հասցեին: Խնդրում ենք նամակի վերնագրում նշել` « **Խաղերի մշակման դասընթացավար / ուսումնական բովանադակություն մշակող**»: Կապ կհաստատվի միայն նախնական ընտրությունն անցած հավակնորդների հետ: